# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ, Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ՝ 091700667 էլ. փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

Ե/125-2020
*09. ապրիլի. 2020թ.*

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու թիվ 17-20 որոշումները:

Առդիր՝ 5 էջ:

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
06801657

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,

**08 ապրիլի 2020թ**

**ՈՐՈՇՈՒՄ 17**

**ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ ԱՊՐԻԼԻ 08_Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2020թ ապրիլի 08-ի նիստի օրակարգը:

1. Սարահարթ համայնքի 2020 թվականի առաջին եռամսյակում բյուջեի կատարման հաղորդման մասին
2. Լոռու մարզի Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին
3. Սարահարթ համայնքի ավագանու անդամ Նազար Մանուկյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հալաջյան Արթուր | | | |
| Քոթանջյան Վազգեն | | | |
| Սահակյան Լյովա | | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |

Սարահարթ համայնքի ղեկավար Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 18

«08» ապրիլի 2020թ

## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ, և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով՝ Սարահարթ համայնքի ավագանին

Որոշում է

1. Ի գիտություն ընդունել 2020 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հալաջյան Արթուր | [signature] | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Սահակյան Լյովա | | | |
| Բարիկյան Հարություն | [signature] | | |
| Բարիկյան Վահան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Արտյոմ Փիլոյան

0680 657

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**08 ապրիլի 2020թ**
**ՈՐՈՇՈՒՄ 19**

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 09-ի <<ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 52-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հալաջյան Արթուր | | | |
| Քոթանջյան Վազգեն | | | |
| Սահակյան Լյովա | | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարահարթ համայնքի ավագանու
«08» ապրիլի 2020 թվականի N 19 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Ջանազյան Արմինե Ադամի – քսանհինգ հազար դրամ, երեխայի ծննդյան գումար
2. Ֆիդանյան Հենրիկ Սեդրակի – երեսուն հազար դրամ, սոց օգնություն
3. Սարգսյան Խաչատուր Արտուշի - երեսուն հազար դրամ, սոցիալական օգնություն

Սարահարթ համայնքի ղեկավար /Ա. Փիլոյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ N 20

«08 »ապրիլի 2020 թվականի

## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՆԱԶԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի 8 ենթակետով, և հաշվի առնելով Սարահարթ համայնքի ավագանու անդամ Նազար Մանուկյանի դիմումը՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու անդամ Նազար Մանուկյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել:
2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հալաջյան Արթուր | | | |
| Քոթանջյան Վազգեն | | | |
| Սահակյան Լյովա | | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |

Համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՀԱՐԹ ... 0680 657